Յովհաննէս եպիսկոպոսի և նորա հոգևորդի Սարգիս վարդապետի մասին մի անգամ խօսք եղաւ արդէն Դ. գլխի վերջում, երբ կամենում էինք Ներսէս Զարաբերդեցու արձանագրութեան ժամանակը որոշել Հաւուց Թառում: Հաղբատի և այլ վայրերի բազմաթիւ արձանագրութիւնների մէջ Յովհաննէս եպիսկոպոսը յիշւում է որպէս շինարար, նուէրընկալ և առաջնորդ, բայց նաև ձեռագրական յիշատակարանների մէջ որպէս մեկենաս, վարդապետ և սրբագրող: Նա Համազասպ եպիսկոպոսի յաջորդն էր, աւելի նշանաւոր շինարարի, որ կենդանի էր դեռ ևս 1261 *թուին, իսկ* 1265 *թուին Վարդան վարդապետը գրել է իւր Երգ երգոցի մեկնութիւնը Հաղբատում «յարհի եպիսկոպոսութե՟ն Տ՟ն Յովաննիսի»(1): Նոյն մեկնութեան ուրիշ ձեռագիրներից պարզւում է, որ հեղինակը յորդորուած է գրելու «յարհիակաւնէն Հաղբատայ եւ յաշակերտաց իւրոց»(2): Սրարածոց մեկնութեան մի յիշատակարան տալիս է նոր տեղեկութիւններ. գրիչը խնդրում է գրքի հեղինակ Վարդանի հետ յիշել «եւ զմեծապատիւ արհիեպիսկոպոսն մեծահռչակ սբ ուխտին Հաղբատայ զՏ՟ր Յոհաննէս, որ զաւրինակն էր սրբագրել եւ զնոր[ին ձե]ռատուն զեղբաւրորդին հարազա[տ] Սարգիս քահանայ, որ ի վարժս կրթ[ութե]ան է պարապեալ, որ եւ շնորհեաց իսկ զաւրինակս»(3): Այս Սարգիսն է, որ վերև բերուած արձանագրութեան մէջ՝* 1273 *թուին արդէն վարդապետ է յիշուած: Վարդանի աշակերտներից՝ Տիրացու և Յովսէփ գրիչները* 1267 *թուին գրել են իրենց ուսուցչի խմբագրած «Պատճառք տաւնից տէրունեաց» ստուար և կարևոր աշխատութիւնը Հաղբատում «յաթոռակալութե տր Յովի մեծի հռետորի եւ սբ վերապատուողի»(4): «Հռետոր» տիտղոսը միջին դարերում գործածւում էր վարդապետ կամ գիտնական վարդապետների համար. սոյն Յովհաննէս եպիսկոպոսը կոչուած է, յիրաւի «անյաղթ գիտնական» մի արձանագրութեան մէջ(1): Յոհան Երզնկացին* 1284 *թուին իւր «Յաղագս երկնային շարժման» աշխատութիւնը գրել է Վախթանգ իշխանացն պատանու խնդիրքով և «մեծագգ եպիսկոպոս տէր Յոհան յագնուական զարմից եւ բարետոհմիկ հարց ծնունդ» յորդորանքով(2). Նորա տոհմական ծագման մասին աւելի պարզ տեղեկութիւն է տալիս Թոմա քահանայի* 1285 *թուի արձանագրութիւնը «ի հայրապետութե տն Յճանիսի թոռն Դոփին», որ յետոյ կ'տեսնենք:*

Այս Յովհաննէս եպիսկոպոսի ժամանակ և հաւանօրէն նորա գլխաւորութեամբ է գումարուել Հաղբատի ժողովը, որի գրադման նիւթը մօտաւորապէս կարելի է կռահել Զագավանից ժողովի կանոններով: Պընդել չենք կարող, բայց հաւանական է, որ Ստեփանոս Օրբէլեանի ձեռնարկին ստորագրող Յովհաննէսը նոյնն է մեր այս եպիսկոպոսի հետ(3): Սորա ժամանակ 1278 *թըւին իւր եղբօրորդի Ծիթլաւսան գրամական մեծ նուիրաբերութիւն է անում վանքին, որի համար կանգնում է հոյակապ խաչքարձան, կրկնելով իւր Ամենափրկչի յետևի մեծ արձանագրութիւնը և այստեղ: Սորա օրով Բարսեղ քահանան* 1279 *թուին շինել է Ս. Զօրավարը իւր սրահով: Յովհաննէս քահանան իւր Յունան, Դաւիթ և Մխիթար եղբայրների հետ կանգնել է մի խաչ և շինել կամուրջ, Լիպարտի որդի Պածած իշխանը և ամուսինը Ռուզայ՝ Մամիկոնեանց տոհմից՝* 1280 *թուին շինել են մի մի խորան, որոնց առաջ և թաղուած են: Իսկ իւր անձնական շինարարութեան մասին ամփոփ տեղեկութիւն ստացանք Ամենափրկչի մեծ արձանագրութիւնից. «շինեցի զգաւիթս, զգրատունս եւ զսրահ նորին, ածի զպաղատն գլխն եւ ետու կազմել զմեծածախ պահարանն Բրգաձորոյ սուրբ*

(1) *Ձեռ. էջմ.* N 1155:

(2) *Ձեռ. Տաթեւի* N 9. *այժմ էջմ.* N 4139: *Նաև* N 1203|1190:

(3) *Ձեռ. էջմ.* N 2604 (փակագծի մէջ առնուածները լրացնում ենք, ցեցակեր են):

(4) *Ձեռ. էջմ.* N 4139:

(1) *Կայենոյ բերդի հանդէպ. Փորր-Աթուանի գոմերի մօտ. Զորագետի ձախ ափին մի խաչարձանի վերայ. «+ Կամաւքն այ ի տրութեն պարոն Սաղ|ունին եւ ի հայրապետութեն տր Յ|ովանեսի անյաղթ գիտնականի»: Արձանագրութեան թուականն է ՉԻԹ* (=1280):

(2) *Հրատարակութեամբ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի.* 1792. *Նախիջեւան: Ձեռ. էջմ.* N 2173. 150*ա: Տե՛ս եւ մեր աշխատութիւնը. «Վախտանգ որդի Ումեկայ». Սիոն.* 1932-1933:

(3) *Շողակաթ. Վաղարշ.* 1913. 22: *Նաև առանձին տետրակով:*